



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16493

891.99

U-13

1904

891.93
U-13

Ս Ա Լ Տ Ի Գ

160

ՍԻՆԵՑՈՒ ՔՆԱՐԸ

1899—1903

Սարի որդի սար կ'սիրեն,
Յաւո քամուն սայ կ'սիրեն:



2003

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մոզես Վարդանեանցի
1904

13

3670

891.99

U-13

ա

Ս Ա Ն Տ Ի Գ

Երրորդ սուրբ ճշմարիտ թղթեր
համարները հարմարեցրելու և

ՍԻՆԵՑՈՒ ՔՆԱՐԸ ³⁵

Քեզի կամարը բարձր ³⁰¹
3 6

1899—1903

35
301

Սարի որդի սար կ'սիրեմ,
Յաւս ըամուն տալ կ'սիրեմ:

1001
1699

Նորեր ըարնըստ հորնորս — Թատուխ Առնա:



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մովսէս Վարդանեանցի

1904

1802 1903

Дос. Цензурою 4 Февраля 1904 г. Тифлисъ.

1 ՀՐԱԽԻՐ.

Արիք տամ ձեզ, իմ այս տաւիղ,
Գուք միշտ ձայնեզ պահէք լարած,
Հէնց որ կ'գայ, մի նեզ շաւիղ,
Լարին դարկէք, կրճքի գրկած:

2 «ՔՈ ԱԼՐՈՄՈՒՄ»

Թոյլ տուք զրեմ սրտիս խորքի
Լոկ այն բառերն սիրոյ երգի,
Երգի՛ որ ինձ և բեզ դիւթեց,
Եւ մեր սրտերն իրար գուգեց:

3. * * *

Չնորհաւոր սուրբ Չատիկ,
Քեզ ինչ երգեմ ես Սառիկ.
Ցախունն սրտիս աղաղակ,
Թէ խանդ սիրոյ նոր նուազ:

4. * *

Լոկ դու էիր անցած տարում,
Սրտիս բերկրանք, սփոփանք,
Եւ դու էիր ինձ յոյս և կեանք
Ներշնչողը քն տարում:

Ա՛խ, քն տարում, անցած տարում,
Մեծ էր ցաւը, խոց սրտիս,
Քեզնում էի միայն գտնում,
Ճարը, զեղը իմ սրտիս:

5. Մ-ԻՆ.

Պըլպուլը թփում ալ վարդ կորոնէ,
Որ լոկ գարնանը այնտեղ նա երգէ.
Իսկ ես Քո սրտում, վեհ տեղ կփնտրեմ,
Որ ցմահ այնտեղ իմ սէրը երգեմ:

6. ՕՐ. Մ. Կ-ԻՆ.

Ի՛նչ մեզը ունիմ Քեզ սիրելով,
Միայն ես եմ Քեզ պաշտում,
Քեզ հետ ժպտալ, անթարթ աչքով
Միշտ Քեզ նայել փափագում:

Անշուշտ ցաւ է այս ինձ տուած,
Որ ունի և ողջ աշխարհն,
Քեզ սիրելով, Քեզ սրբացրած
Պիտի պաշտեմ յաւիտեան:

7. ՄԵՎՂՏԱԿԻՅ.

Խորունկ սրտիս շէմքի առաջ,
Հազար խոհեր կանդ են առած.
Չկայ ոչ որ ինձ սիրտ տուող,
Ոչ բոյք, եղբայր և ոչ ծնող:

Երկինք, դ՛ու, որ այնպէս շքեղ
Եւ մերթ ցորմունք ունես անեղ,
Կարես և իմ ցաւեր բաշել,
Տանել վերին բարձունք հանել:

Երկիր, դ՛ու, որ այդպէս դադառկ
Ուժեր ունես լոկ քեզ յատուկ,
Կարես կրել և իմ ցաւեր,
Խեղճեմ, սրտիկս չանէ աւեր:

Դ՛ու ծնվ, կրծքիդ տակից փրփուր
Որ կողողես բո ափն ի դուր,
Կարես շիջել բոցը կրծքիս.
Որ չըպլլուի իզձը սրտիս:

«Հեռու, տղա, փախիր գնա,
Մեզնից դարման դու մի յուսա.
Մեր ոյժ, ցորմունք, ահեղ բոմբիւնք,
Հէնց մեր ցաւերն են որ ունենք»:

8. ՀՕՐԵՂԹՐՄ—ԹԱՌՍԻՒՆՈՒՆ.

(Ն. Մաղանդարեան).

Անշունչ թառը, շունչ է առել քո ձեռքում,
Չայնեզ լարերն սուզ ու թախիժ են ծնում
Աւաղ, եարդ որպէս լեռ-բար քո առջև,
Չի հասկանում սիրտ մորմորոյ հառաչներ:

9. ՄԻ ՀԱՐՑ.

Տարին կը գայ, տարին կերթայ,
Բայց մեզ նա ինչ աւանդ կը տայ.
Անճար խոցի մի կուռ շարան,
Թէ ծիլ կեանքի սիրոյ կայան:

10. ՕՐ. Մ. Կ-ԻՆ.

Հեզիկ լուսինը պարզկայ երկնքում,
Միշտ ֆեզ է նայում, ֆեզնից լոյս առնում.
Համեստ շուշանը կանաչ հովիտում,
Քո պարզ զգեստից օրինակ առնում:

11. ԳԻՏՅԱՆԵ ԵՂԻՐ.

Եթէ հասնի ըոպէս վերջին,
Երկնից հրեշտակ ժպտայ խնդին,
Որպէս հրդէհ աչերս մարին
Եւ ես տապիւմ ջերմով յետին՝
Եթէ գնեն, ինձ սև դադող,
Տանեն դէպի անլոյս գիշեր,
Հոգիս կատղած բաղխէ եթեր
Եւ ես սառչիւմ միապաղաղ՝
Գու մի կարծիր եթէ իսպառ
Ես էլ անցայ, ֆեզ մոռացայ.
Քանի Գու կաս, ես զաղտաբար
Չունչ կըքաշեմ կըծքիդ վերայ:

12 ՍԱՐԻ ԱՂԶԻԿ.

Սևիկ աչերդ, սարի աղջիկ,
Սովոր են միշտ շանթելու,
Չուշան թևերդ այդ փափլիկ,
Յաժում են միշտ զրկելու:

Առտու ցօղը վարդ թշիդ
Բիծ է թողել թող մաքրեմ,
Սարի ծաղկից քո կըծքիդ,
Պսակ կապեմ, ֆեզ զուգեմ:

13 ՔՈ ՀԱՐՅԻՆ.

Ապրիլ ամսին Քեզ տեսի,
Մանուշակէ փունջ ձեռիդ,
Վառ մայիսին սիրեցի,
Այ վարդ կապած Քո կրծքիդ:

Սարի լանջին Քեզ տեսի,
Թիթուան ընկեր, ծաղկի մէջ,
Քարի ծէրին Քեզ տեսի,
Սէքս ծլած սրտիդ մէջ:

14

* *

I

Նոր զարունն էլ եկաւ գնաց,
էլ ում ասես չ'պճնեց,
Լոկ իմ ետը եկաւ մնաց,
Նէ ինձ փարեց, ինձ զուզեց:

II

Ծաղիկ զրի տանջուած սրտիս,
Ներսի տապից թուամեցաւ,
Երբ Քեզ սեղմի փրուն սրտիս,
Ծաղիկն էլի գոյն առաւ:

15 ԷՂ ԶԵՄ ԵՐԳՈՒՄ.

Երգում էի կարմիր վարդը պարտիզում,
Սփռում էի կոյսի սէրը աշխարհում
Հրճում էի աստղի ցօլքից մայիսուայ,
Գերում էի հէզ կոհակից զիշերուայ:

Աշունն եկաւ վարդս թօշնեց ու անցաւ.
Վարդի տեսքից վառուն աչերս մարեցաւ,
Զկայ ալ վարդ, ինչո՞վ կարեմ պճնուել,
Խամբած վարդը, ինչո՞վ կարէ ինձ զերել:

Ա՛խ էն վանքը կուսին տարաւ կլանեց,
Անբիծ սիրտը ինձնից ծածկեց ու պահեց.
Ումնից լսեմ սիրոյ երգեր ու երգեմ,
Զկայ կոյսը, ո՞ւր անբիծ սիրտ ես գտնեմ:

Մռայլ ամպերն երկինք կալան պատեցին,
Սիրած աստղերս ինձնից տարան, զերեցին,
էլ ո՞ւր նայեմ, սե երկնքո՞վ սիրտ աւնեմ
Զկան աստղերն, ես ինչ սիրով վեր նայեմ:

Մրրիկ թաթառ մեծ գոշումով ծով մտան,
Կոհակները ուռած կրծքով մարտ մտան,
Ծովը եռում, շունի հանգիստ ու դադար,
Ա՛խ անդարձ է հէզ կոհակը ինձ համար:

16. ՆՈՐ ՏԱՐՈՒՄ.

Ծաղկէ պսակ քո ճակտին,
 Կապէ կոյսը փափկասուն,
 Եւ ճռողիւն սոխակին,
 Զօնէ սրտիդ վառ գարուն:

17. ԵՍ ԿՍԻՐԵՄ.

Ես կսիրեմ առաւօտը,
 Պարզ գիշերուայ մայիսեան,
 Ճոխ գոյներով դաշտ արօտը
 Ցանած ցօղով մայիսեան:

Սիրում եմ և ծաղիկ խոտեր,
 Հոտով անուշ մայիսեան,
 Նոցա մօտ և սիրուն կոյսեր
 Փնջած ծաղիկ մայիսեան:

Եւ կսիրեմ ծաղկի բուրումն,
 Բուրած խնկով մայիսեան,
 Եւ անդադար առնել բուրումն,
 Կոյսի ձեռքից մայիսեան:

Սիրում եմ և յալբել, ծաղկել,
 Ծլել կեանքում մայիսեան,

Թէև դեռ շուտ նաև հանդէլ,
 Ցնդիլ կեանքում մայիսեան:

18. ՍԻՐՈՅՍ ԵՐԿԻԶՆ.

Առաւօտ էր, արևելի հեռու ծայրում,
 Ամպերն հլած լերան զլխից,
 Ոլոր—պտոյտ, թափով սարում,
 Կայան էին փնտրում նորից:

Հէնց այդ ժամին, շաղանխտ
 Խուլ անտառի խոր խորշում,
 Երգում էի թովիչ հանգիստ
 Իմ նոր գտած վարդի ծոցում:

Սոխակն էր որ ծառի ճիւղին,
 Նստած—ներկայ իմ երգին,
 Լոկ նա սովրեց հոգուս ցնծում,
 Արտայայտել իւր երգում:

Բայց էն սիրոյ ժամերն անցան,
 Ցաւի վշտի փոխ անցան,
 Ծաղիկ կեանքիս ետուն երգերն,
 Անհետ մեռան ու անցան:

Մինչ այսօր էլ երբ մտնում եմ
Յուշիկ քայլով ես անտառ,
Սոխակն անուշ ձայնով սիրտ վառ
Սէքս է երգում, ինձ տանջում:

19. ՄԵՆՔ ԵՂԲԱՅՐ ԵՆՔ.

Մէկ սիրտ մի հոգի երկու մարմնի մէջ,
Պահենք դէպ ընկեր մեր սէրը անշէջ,
Խօսենք նորա հետ, ցոյց տանք նպատակ,
Եւ ճանբայ՝ որով տանէ յաղթանակ:

Թէև մենք չունենք աղայ ծանօթներ,
Եւ կամ բռնած զիրք մեծատան առջև,
Ապրենք մենք խոհեմ և բարի գործեր
Միայն մենք զնենք զիւրացու առջև:

Տարին պիտ անցնի, մենք էլ պիտ անցնենք,
Էլ յաւէտ կեանքի ի գուր կսպասենք,
Ձգենք մեր խօսքը սիրտը գեղջկայ
Գեռ շատ կապրի նա, մինչ կայ սպազայ:

Էլ ինչ յիշատակ և կամ մահարձան,
Յանկամք ունենալ մեր շիրմի վերան,
Յիշատակ՝ խօսքը զիւրացու սրտում,
Արձանը՝ խօսքի ձայնը նորանում:

20 ՄԵՆԱՌՐԸ.

Տարագս փոխած, կարած մահուդից,
Կեանքից հեռացայ դէպի մենաստան,
Նորա կուռ ըմբոստ կամքի պահանջից,
Ես ինձ մոռացայ, մտայ մենաստան:

Անցան տարիներ: Ես փակուած վանքում
Լոկ սուրբ գրքերով անցրի իմ օրեր,
Գիտում էի շուրջս խօսել փափազում,
Տեսնում էի լոկ չոր բարէ պատեր:

Եւ այժմ ահա, ծարաւ եմ զգում,
Գործելու ծարաւ, տքնելու եռանդ,
Կեանքը ինձ համար պարծանք համարում
Եւ նորան ձգտում սրտով ջերմեռանդ:

Աւանդ, նոս արդէն ինձ անյուշ մոռցած,
Փոխած տարազից ինձ չէ ճանաչում,
Տարիներ առաջ, իրենից փախած
Որդուն չի տեսնում, էլ չի ընդունում:

21. Գ. Ք. ԱՐՁԱՆԸ

(Ա. Էջմիածնի յօրհեանին)

Անթարթ աչերով դէպի սուրբ տաճար

Գիտում, ցաւում եմ վշտալի սրտով,
 Եւ անսնում թշուառ ամբողջ անհամար,
 Նորան զխնելիս սրտի մորմորով,
 Կեցցէէ գոչում,
 Յօբէլեան տօնում:

Ես էլ իմ սրտի խորին յոյզերով
 Գէպի հայ Տաճարն աղօթք եմ կարգում,
 Մարդիկ չեն լսում իմ ձայն իմ կորով,
 Կարեկից գէմբով գէպ ինձ են նայում,
 Բայց չեն հասկանում
 Ի՞նչ եմ մրմնջում:

22 ՍԳԱԻՈՐ ՊԱՏԱՆԻՆ.

Մի գալ գարուն, մի գալ ծաղիկ
 Սիրտս սեցաւ, մի գալ լորիկ.
 Ենքս մեռաւ, ան ու հառաչ
 Սիրտս կերան, սիրտս կանաչ:

Ինձնից հեռու, հեռու սոխակ
 Գնա երգիլ, երգդ սիրուն,
 Անսիրտ մարդը կուզէ կոչնակ,
 Ի՞նչ փոյթ նորան շքեղ գարուն:

Ես պիտ զրկեմ, սիրոյս ուրանն,
 Ուրանն՝ այս սև նորեկ գարնան,
 Մինչ նոր կեանքով ծնուիմ երթամ,
 Յաւէտ նորան ընկեր մնամ:

Նոր կեանք... ցնորք, պտուղ մտքի,
 Եւ կամ երազ տխուր ժամի,
 Երազ անվերջ և սրտակնւլ,
 Էն կեանքն անձայն և մարդակնւլ:

23. ԱԳԱՄԵԱՆԻ ՊԱՏԿԵՐԻՆ.

(Գաղաղում)

Այդ թորշոմած գէմբը գերում
 Անթիւ սիրտ էր գրաւում,
 Երբ նա բեմում ցաւում, տանջում,
 Իբր՝ Լիբ — Համլէտ էր խօսում:

Այդ հանճարը քարացած,
 Լարեց մեր սիրտն նոր երգով,
 Նա տուրք էր մեզ պարզեամ
 Չողաց, թուա մեծ հետքով:

24. ՋԱՆ — ԳԻԻԼՈՒՄ.

Մեր շէնի տեղը փոս ա,
 Մեռածը հունց կը խօսա.

Եարալու եմ սիրտ մի տալ,
Թէ՛ժ էրուող սրտաս խօսամ:

Մըն թեաւոր դուշ պըտի,
Սիրած եար, քեզ հետ պըտի:
Է՛ հոնց անեմ հեռու ես,
Օտար տեղ քեզ հետ պըտի:

Սլէթայ ես բազուանչի
Քեզնից մեծան համանչի.
Երբ մենակ ես բազումը
Չեոքաւ ըրա ինձ կանչի:

Վարդ սիրեցի չորցըին,
Եար ճարեցի թուցըին.
Էս լէն ու բճլ աշխարհում,
Ինչ սիրեցի կորցըին:

25 ԴԵՊԻ ՎԵՐ ԱՄԲՈՒՍ.

Տխուար ամբոխ ինչո՞ւ ցածում
Կեղտի տիղմի շրջանում,
Կուրացել ես և չես տեսնում
Թէ՛ մենք մնց ենք կեանք վարում:

Գն, այդ նեխուած, դարշուտ օդում,
Զունչ ես քաշում և հրճում,
Ու բախտաւոր քեզ կարծելով,
Նոր կեանքի դուռ չես բաղխում:

Կեանքը այդ չէ, որ դու ունիս,
Կեանքի ծաղր խեղճ ամբողիս,
Քեզնից վերև բարեբաստիկ
Անյայտ կեանք կայ է՛յ ամբողիս:

Ուր կ'անուիս մարուր օրով,
Սրտով հանդիստ ու գուարթ,
Ողջ օրերը ուրախ ժպտով,
Քեզ կողջունէ վառ ալ վարդ:

Ուր կամքն ազատ ու համարձակ
Որքան կուզէ թող ճախրէ,
Գերու շղթայքն անգամ արձակ
Որ նա անյոյս չը տխրէ:

Մենք վերև ենք, վերը սիրիք,
Վերև է կեանք խեղճ ամբողիս,
Քանի տիղմում ընկած
Վեր սլացիլ կոչը:

1001
3695



26. ՊԱՂՏԵԼԻ Տ. ՍԻՐԱՆՈՅՉԻՆ.

(1904 Ն. տարուն).

Տարիները եկան, գացին,
Դու թարմ, աշխոյժ մնացիր,
Հայոց անշուք, խաւար բեմին՝
Դու վառ կանթեղ մնացիր:

Դու, մեր միակ Արտիստուհի,
Բեմի օծեալ թագուհի,
Եռանդաբեր նոր տարում,
Ծաղկած մնայ հայ բեմում:

27. * *

Լուսինն ելաւ սարի գագաթ,
Մթին ձորին լոյս կաթեց,
Սիրտս խաւար, սիրտս գունատ,
Կրկին սիւս շողք պատեց:

Ա՛խ, մի սրտի լուսին լինէր,
Իմ սև սրտին էլ լոյս տար,
Լոյսն է պակաս լուսաւորէր՝
Դուցէ սէրս էլ ետ գար:

28. ԵՐՆԷ՛Վ ԺԱՅՈՒՆ.

Սև կարիքի խոր ակոսը իմ ճակտին,
Կանգնած էի էն սև Կասպեան ծովափին.
Եւ կարիքը որպէս դահիճ իմ գլխին,
Քամու բերնով մահ էր զոչում ինձ ուժգին:

Դու ալիքը կուռ ծփանքով,
Գալիս ժայռին էր խփում,
Ծովը յուզում և խորգալով
Յետ էր սուրում շըշընջում:

Ժայռի կարիքը գոռ ալին է,
Որ բաղխում է ու զարկում,
Բայց թէ ժայռը ինչ ուժգին է
Որ չի ընկճում, փըշըրում:

Յանկարծ ծովում խաղաղ տիրեց,
Ալին ժայռին դադար տուեց.
Արև ծագեց, արև պայծառ,
Սիրտս ժայռին երնէկ կուտար:

29. ՅՈՒՍԱԲԷ՛Վ ՈՐԲԵՐ

Անտուն ու անտէր այս սև աշխարհում,
Օրեր շատ անցրինք ոտաբաց, տկտր.

Սոված ու ծարաւ մեծ փողոցներում,
 Լուռ արցունք բամբինք տրտում, գլխակոր:
 Մեր մանուկ կեանքում
 Ի՞նչ շտեսանք աշխարհում:

Մտանք մեծատան շքեղ դարպասից,
 Բակում կանգնեցինք ձեռքեր կառկառած.
 «Ո՞հ կտոր ըմ խաց, փարայ մը վերից
 Թալեցէք մեզի, հարուստ ողորմած»:

Մեր աղքատ կեանքում
 Ի՞նչ շտեսանք աշխարհում:

Անօձիք, անթիւ շորեր մենք հագած
 Ցանարի դռան արձաններ դարձած,
 Ձեռներս պարզած, վիզներս ճրկած,
 Հացեզին խնդրինք մենք լալ ձեացած:
 Մեր անխօս կեանքում,
 Ի՞նչ շտեսանք աշխարհում:

Ամայի, խոպան դաշտում երբ տեսանք,
 Խաչքար կամ մատուռ, մենք գետին ընկանք,
 Հեծ ու հառաչով, լերկ կուրծք ծեծելով,
 Մեր բախտն սղբացինք, նոր կեանք խնդրելով:

Մեր կանաչ կեանքում
 Ի՞նչ շտեսանք աշխարհում:

Մեր աչքը թաց էր էն անցած տարում,
 Չկար մեզ բաժին ժպիտ ու խնդում:
 Մեր սիրտը աւեր, շունի նորոգում,
 Ել ուրախ կեանքի գուր ենք սպառում:

Ո՞ւր ենք ապրում աշխարհում.
 Չուր ենք ապրում աշխարհում:

30. * *

Համաշխարհային թախիժով պատած,
 Սիրտս սև, խաւար, փրփուրով լցած,
 Փախայ մարդկանցից, աշխարհից խռով,
 Գնում էի ես չոր անապատով:

Անցան տարիներ: Չատ էի յողմել.
 Կենսատու ջրի կուզէի հասնել.
 Գեռ մարդ շտեսած վճիտ աղբիւրից,
 Կուզէի խմել և պրծնել մահից:

Ինչ աղբիւրից որ մարդ ջուր է խմում
 Ցաւի կարիքի թոյն է մէջ բամուս,
 Յետոյ խմողին մահ է սպառնում,
 Եթէ նոր ցաւը սրտին է հասնում:

Հազիւ հազ հասայ օվազի ծայրին,
 Ահա երեք մարդ աղբիւրի կողքին,

նստած լալիս են կուրծքները ծեծում,
Ա՛խ ու վա՛յ կանչում, սրտեր մորմորում:

«Ո՛ւր բարով եղբայր» լաց ու կականով
Նորա դարձան ինձ, ոտքի ելնելով:

— Ինչո՞ւ էք լալիս ցաւակից եղբարր
Աղբիւր էք գտել, ինչո՞ւ կը սգար:

«Մենք աշխարհային թախիծով բռնուած
Երեք ճամբորդ ենք այստեղ հաւարուած՝
Աղբիւր չթողինք մեծ անապատում
Ուր որ չլացինք մեր ցաւն անապատում»:

Էլ ո՞ւր մոլորուեմ չոր անապատում,
Քանի սիրտս էլ լքման է դիմում,
Եթէ ի վերջոյ անյոյս պիտ մնամ,
Աւելի լաւ չէ սոցա միանամ:

Ասի, նստեցի երեքի կողքին,
Աղեխարշ ողբով ուժ տուի կոծին,
Վառուն աչերիցս էլ կայծ չէր թռչում
Եւ ներսս սիրտս, որդ էր լոկ կրծում:

Այն օրից այսօր շատ օր է անցել,
Մեզ նմանների թիւը բազմացել:

Եւ մեր շուրջն արդէն մեծ անապատում
Մարդկութիւնն ամբողջ սզում է կոծում:

Մահուան ու փթման սոսկալի ժամում,
Էլի անթառամ կեանք է երագում.
Վերջդ փթումն է, ինչ ես որոնում
Կեցիր և կոծիր չոր անապատում:

31. ԳԷՊ ՀԱՅՐԵՆԻՔ.

(Ուսանողներին)

Քեզ ենք դալիս մեր հայրենիք,
Նոր, թարմ, ազատ մտքերով,
Չարքաշ, անուշ հայ ախպրտիք
Չեզ ենք թռչում բաց գրկով:

Տարիները դալիս գնում,
Սահում էին անդադար,
Անվերջ, խաղաղ փառքի ծովում
Քուն շունէինք Քեզ համար:

Այժմ դալիս Քեզ ենք դիմում,
Մեր պաշտելի հայրենիք,
Չունչներս Քեզ նուէր բերում
Չնչի կարօտ հայրենիք:

Քո ստացած խոր խոցերին,
Մենք բերում ենք պալատան,
Ախով անցրած սև օրերին,
Մենք կլինենք փարժ գուտան:

Քեզ ենք գալիս մեր հայրենիք
Նոր, թարմ, ազատ մտքերով,
Չարքաշ, անուշ հայ ախպրտիք
Չեզ ենք թռչում բաց զրկով:

32. ԻՄ ԸՆԹԵՐՅՈՂԻՆ.

Ես էլ կամեցայ շատերի նման,
Տպած ունենալ խոհեր աննման.
Չեռք առայ մատաղ զրիչ ապիկար,
Եւ լոկ գրեցի տաղերս այս տկար:

Որպէս առաջին արդիւնք նոր գրչի,
Յուսով եմ ցուրտ խօսք շատ էլ չի դիպչի.
Այլ ջանք և եռանդ ինձ կառելցնեն,
Որոնք իմ սրտից նոր երգ կ'հանեն:



Գիճն է 10 կուպէկ

2013

